բիլէ մինչև ցարդ։ Եւ զմիտս վէզիրին յոր կոյս՝ չգիտել ասացաւ ամենայն ուրեք։ Եւ Սէյտին որ ի բերանն էր Մահմարին՝ առնէ յաղթութիւն մեծ որդովն իւրով զբազումս[1]) կոտորելով, և գրէ առ վէզիրն. Զեմ աւելի քան զՀիւսէյինն որ ոչ խնայեցեր, գիտեմ և ինձ զայն՝ բայց կամք քո է։ Եւ զԻսմայիլն փորձէ այսպէս, ասէ. Որդեա՛կ իմ, դու ահա՛ տեսանես զծերացեալս, ի մահճի ևս զանկեալս, այսուհետև վէքիլ ես արքայի, պնդեա՛յ զմէջ քո արիութեամբ և կաց ի պատրաստի ամենայն գործոյ ի փառս արքայի։ Եւ նա ասէ. Եղիցի ըստ բանի քում, կամ ի պատրաստ ապաւինելով[2]) յաղօթս քո ո՛վ հայր պատուաւոր։ Երկրորդ, ասացին թէ յորժամ էրն ի թէֆթիչի՝ բազում արս կոտորեաց ուր և հասանէր, և յէնկիչէրոց բազմաց մեծամեծքն որք ասա, և քէհապէկն մոմռեալ ոչ տեսին պատշաճ. ըստ այսմ, ասէ, խօսեցեալ լինի քէհապէկն վէզիրին։ Երրորդ, տեսանէր՝ թէ բամք զօրաց կան կամեցողք Իսմայիլին ի վէզիրութիւն, վասն որոյ ինքն հիւանդանայր և ի փառս զայմախամութեան զնա կացուցանէր անդ, զի այնու յայտնեսցի։ Եւ ապա առաքէր ի բան ոմանց ասել թէ Ցղեաց զի առաքեսցէ զգլուխ Սէյտիին և կամ զգլուխ Ալիին և ինքն լիցի սէրէսքէր։

Ցինն Յունիսի որ Զչի երեկոյի կրակ անկանի ի Պուրսայ ի թաղս Հրէից, որք ոչ մերձենան ի կրակն վասն Շաբաթու գիշերոյն, մինչև բազում լինէր, ասէ, և մինչև ի կէս թաղին այրէր։

Եւ ի ԺԳ Յունիսի ապա լինէր հացն ՃԼ տրամ և յետ այնր ոչ ևս օգտէր և այն։ Եւ լինէր կրկին ևս ի Պրուսայ[3]) կրակ և ընդ մէջ քաղաքին քառակողմի զամենայն չուկայսն այրէր ամենայն արհեստաւորաց։

1) զբազում. 2) յապաւինելով. 3) Բրուսայ.